ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 21 » փետրվարի 2025 թվականի N: 47 - Ա ք.Գյումրի

ԱՍՏՂԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետի, 172-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի, 16-րդ հոդվածի 1.8-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ կետի, 6-րդ կետի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժիշկ Անժելա Իսահակյանի կողմից 2024 թվականի նոյեմբերի 12-ին տրված ZX N 000909 անաշխատունակության թերթիկը և Աստղիկ Պետրոսյանի 2025 թվականի փետրվարի 19-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հովունիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աստղիկ Պետրոսյանին տրամադրված հղիության և ծննդաբերության արձակուրդը երկարաձգել մինչև 2025 թվականի մարտի 7-ը ներառյալ:

2. Աստղիկ Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հովունիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն

կազմակերպության ֆիզիկա, մաթեմատիկա և բնագիտություն առարկաների ուսուցիչ Գայանե Փիլոսյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝